ՉԾՆՎԱԾ ԱՂՋԻԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ և ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԾՆՎԵԼՈՒ ՊԱՀԻՆ ՍԵՌԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԵՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆԸ

WORLD BANK GROUP

Մարիա Դավալոս
Ջիորջիա Դեմարշի
Նիստիա Սինհա
Աղքատության գլոբալ պրակտիկա
ԵԿԱ տարածաշրջանային թիմ

Մարտի 4, 2015

Ինչ ենք հասկանում «չծնված աղջիկներ» ասելիս

- **«Չծնված աղջիկներ» → նրանք, ովքեր չեն ծնվել սեռական պատկանելիության պատճառով**

- **Սովորաբար հասարակությունում ավելի լայն գենդերային անհավասարության ախտանշանն է**

- **Այն դրսևորվում է տղա երեխային տրվող մեծ նախապատվությամբ**

→ սովորական պայմաններում ակնկալվողի համեմատ տղաների ավելի բարձր տոկոս քան աղջիկների



WORLD BANK GROUP

Գենդերային անհավասարության կայուն դրսևորում Հայաստանում, հատկապես տնտեսական հնարավորությունների առումով

- Աշխատուժի մասնակցության մեծ և աճող ճեղքվածք
- Աշխատավարձի ճեղքվածք, որը պայմանավորված է նաև աշխատատեղերի ուղղահայաց և հորիզոնական սեգրեգացիայով
- Ձեռներեցությունը կանանց շրջանում հազվադեպ է
- Կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունները (որոնք հաճախ այրի են կամ որոնց ամուսինը երկրից հեռացել է) կանգնած են աղքատության ավելի մեծ վտանգի առջև
- Անհավասարությունն ակնհայտ է սեփական կարծիքի արտահայտման և հանրային մասնակցության առումով՝ կանայք ավելի քիչ են ներգրավված քաղաքական և պետական կառույցներում

Այդ արդյունքների վրա ազդեցություն են թողնում գենդերային ավանդույթները

WORLD BANK GROUP

Հայաստանի բնակչությունն հավասարակշռված չէ բաշխված ըստ սեռերի, ցուցաբերելով գենդերային անհավասարակշռություն՝ տղաները ավելի շատ են քան տղամարդիկ



65 տարեկանից բարձր տարիքային խմբում կանայք կազմում են 62 տոկոս, սակայն 0-ից 14 տարեկանների խմբում ընդամենը մոտ 46 տոկոսը:

WORLD BANK GROUP

Հիմա կանդրադառնանք տարիքա-սեռային բուրգի հենքին

Տղամարդկանց վաղ մահացության երևույթը պահանջում է հետագա հետազոտություններ և քաղաքականության ջանքեր



Սակայն այստեղ մենք անդրադառնում ենք երիտասարդների սերնդին, որտեղ տղաները իրենց քանակով գերազանցում են աղջիկներին

WORLD BANK GROUP

Յուրաքանչյուր 100 նորածին աղջկա դիմաց Հայաստանում ծնվում է 114 տղա, որը համեմատելի է Չինաստանի և Հնդկաստանի որոշ մասերի ցուցանիշների հետ

Ծնելիության սեռային համամասնությունը Հայաստանում, Հարավային Կովկասում և որոշ Ասիական երկրներում, 2009-2013թթ. միջինը



Նորածինների և երեխաների սեռերի տարբերության հարաբերակցության միտումները Հայաստանում, 1979-2010թթ.



Ծանուցում. Ծնունդի սեռի հարաբերակցությունը (ԾՍՀ) = ծնված տղաների թիվը/ծնված աղջիկների թիվը.
Աղբյուրները: ՄԱԿ-ի վիճակագրությունը; Դաս Գուպտա (2014) Մարդահանարի տվյալներ.

WORLD BANK GROUP

Սակայն, ի տարբերություն այդ Ասիական երկրների, գենդերային հետևանքների տեսանկյունից երեխաների միջև տարբերություն չկա

Օրինակ՝ աղջիկների համար կրթությունը հավասարապես հասանելի է և նրանց թիվը բուհերում նույնիսկ ավելի մեծ է քան տղաների



Աղբյուրը. Համաշխարհային զարգացման ցուցանիշները

WORLD BANK GROUP

Ինչ է թաքնված այդ երևույթի հետևում

1. Տոյայի նախապատվություն
2. Ծնելիության նվազում
3. Անցում և ցնցումներ
4. Սեռի հայտնաբերման տեխնոլոգիա

WORLD BANK GROUP

Տղայի նախապատվություն

Առկա հարցումների համաձայն գերադասությունը տրվում է որդուն, որն ավելի ցայտուն է արտահայտված գյուղերում

«Ընտանիքում մեկ երեխայի դեպքում, ո՞րն է երեխայի ցանկալի սեռը»



WORLD BANK GROUP

Ինչու են ընտանիքները գերադասում որդուն(1)

Ծնողական աջակցություն

- Տարեց ծնողների խնամք (ֆինանսական օգնություն, համակեցություն)
- Տղաները ամենօրյա խնդիրների ավելի արդյունավետ լուծումներ են գտնում քան աղջիկները (մասնավորապես պետական կառույցների կամ պաշտոնյաների հետ շփվելիս)
  - «ներկայումս, որ հաստատություն էլ գնաս և շփվես տղամարդ աշխատակցի հետ, նա չի ցանկանում զրուցել կնոջ հետ [...] Նրանց համար ավելի հեշտ է զրուցել և պայմանավորվել տղամարդու հետ» (երևանցի մի կին)
- Աղջիկները հաճախ ընկալվում են որպես հոգսերի աղբյուր (դժվար է հետևել նրանց կյանքին, մեծացնելն ավելի ծախսատար է, իսկ ապագան մտահոգիչ)
  - «երբ գիտակցում ես, որ աղջիկ ունենալու դեպքում ստիպված ես լինելու հոգալու նրա ապագայի մասին, նախընտրում ես տղա ունենալ, որի ապագան իր սեփական ձեռքերում է: Տղան ավելի շուտ կարող է երջանիկ լինել քան աղջիկը:» (Ախուրյանից մի կին)

Աղբյուրը. Դադվիք (2014) հիմնված որակական հետազոտության վրա

WORLD BANK GROUP

Ինչու են ընտանիքները գերադասում որդուն (2)

Ծնողական աջակցություն (շարունակություն)

- **Ամուսնանալուց հետո դստերն այլ ընտանիքի է պատկանում**

[Ծնողները] «… քեզ ավելի լարված ես զգում քո դստեր տանը՝ միշտ վախենում ես, որ նրա ամուսինը կեզ կասի, որ չափից շատ ես ուտում» (Ախուրյանից մի տարեց կին)

- **Խորհրդայինշրջանից հետո մասնավորեցված անշարժ գույքի ժառանգողը ավանդաբար տղաներն են, քանի որ աղջկան ժառանգելու դեպքում գույքն այլ ընտանիքի սեփականություն կդառնա:**
    - **«արժե՞ արդյոք այդքան ջանք թափել տուն կառուցելու համար, եթե սեփական տղայի փոխարեն այն փեսային կհասնի»**
    - **«հազարից մեկն է որոշում ինչ որ բան թողնել աղջկան»**
    - **«աղջկան գույք թողնող ծնողը խելք չունի»**
    - **«ես ունեմ երկու որդի և երկու դուստր, սակայն նույնիսկ եթե իմ տղաներն ինձ վատ վերաբերվեն ես սեփականությունը աղջիկներին չեմ թողնի»**

(Վոսկեվազ գյուղի տարեց կանանց միջև զրույցից)

- **Վերաբերմունքը կարող է փոխվել, երբ դստրերը.**

- **ավելի մեծ հարգանքի են արժանանում ծնողներին խնամելու համար քան հարսերը, որոնք այլևս այդքան հնազանդ չեն, որքան տասնամյակներ առաջ,**
- **որոշ դեպքերում ֆինանսապես ավելի անկախ են դառնում,**
- **մարտահրավեր են նետում ժառանգության ավանդույթներն:**

Աղբյուրը. Դասվիր (2014) հիմնված որակական հետազոտության վրա

WORLD BANK GROUP

Ինչու են ընտանիքները գերադասում որդուն(3)

Տոհմի շարունակում և ընտանիքի սոցիալական դրվածքի պաշտպանություն

- Ընտանեկան գծի պահպանում՝ երբեմն նույնիսկ ավելի կևնոր հանգամանք է համարվում քան որդուց նյութական օգնությունը
  - *«տղա ունենալը հպարտության, այլ ոչ թե տնտեսական բարեկեցության խնդիր է»*
  - *«մեր ընտանիքի ազգանունը կրող երեխա ունենալու ցանկությունը նպաստ ստանալու հետ չի կապված»*
  - Միայն դստրեր ունեցող և ասոնց արու զավակի ծնողները կարող են պիտակավորվել որպես «անզավակ»

- Տան տղամարդու առնականության դրսևորում
- Ընտանիքում մոր հեղինակության ամրապնդում
- Համայնքում ընտանիքի սոցիալական դիրքի պահպանում
- Քույրերի պաշտպան

Աղբյուրը. Դադվիք (2014) հիմնված որակական հետազոտության վրա

WORLD BANK GROUP

Ծնելիության նվազում

WORLD BANK GROUP

Նախորդ դարի **90**-ականների սկզբներից ծնելիության ցուցանիշի նվազմանը զուգընթաց աճում է նորածինների սեռերի հարաբերակցության տարբերությունը



Ծանուցում. Ծնունդի սեռի հարաբերակցությունը (ԾՍՀ) = ծնված տղաների թիվը/ծնված աղջիկների թիվը.
Աղբյուր: Էբենշտայն (2013), հիմնված ՄԱԿ-ի, Համաշխարհային բնակչության հեռանկարները (2013).

WORLD BANK GROUP

Այդ երկու միտումները տեսանելի են ողջ երկրում, սակայն փոփոխություններն ավելի մեծ են գյուղական վայրերում

Ծնելիությունը նվազել է ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում (երեխաների թիվը մեկ ընտանիքում)



Սեռերի հարաբերակցությունը աճել է և հատկապես մեծ է գյուղական վայրերում



Աղբյուրը. Էբենշտայն (2013) հիմնված ԺԱՀ տվյալների վրա

Տղա երեխա ունենալու հավանականության կրճատմանը զուգահեռ ծնողները կարող են հրաժարվել երեխա ունենալու միտումից

Եկրսեռ երեխաներով ընտանիքների տոկոսը ըստ առկա երեխաների սեռի



Աղբյուր: Էբենշտայն (2013), հիմնված ՄԱԿ-ի, Համաշխարհային բնակչության հեռանկարները (2013).

.

WORLD BANK GROUP

Սեռի հայտնաբերում

Տղա երեխա ունենալու հավանականության նվազման դեպքում ապագա երեխայի սեռի որոշման տեխնոլոգիաների զարգացման արդյունքում ծնողները երեխայի սեռն ընտրելու հնարավորություն են ստացել

Հաջորդ երեխայի սեռի հարաբերակցությունը



→ 2010թ. հարցմանը մասնակցած կանանց մոտ «չծնված» աղջիկների թիվը կազմել էր 6.84%, որը հավասար է առաջին երեխա ունեցող ծնողների երեխաների սեռերի տարբերության հարաբերակցության կեսին

Աղբյուրը. Էբենշտայն (2013) հիմնված ԺԱՀ տվյալների վրա

Տղա ունենալու ուղղությամբ միտումը, որը հատկապես վառ է դրսևորված կանանց մոտ, բխում է մի քանի հանգամանքներից…

- Երեխա ունենալու կամ հղիությունը ընդհատելու մասին որոշման հիմքում ամուսնու խոսքը որպես կանոն որոշիչ դեր ունի
  - *«Եթե տղամարդն ինչ որ բան որոշի, այդպես էլ կլինի: Կինը կարող է ընդվզել, սակայն վերջնական որոշում կայացնողը տղամարդն է»* (Վոսկեվազ գյուղից մի կին)
- Ճնշման մեկ այլ աղբյուր են սկեսուրները
- Տղա ունենալու նախապատվությունը մեծապես պայմանավորված է շրջապատի կարծիքով
  - «միայն իսկական տղամարդն է տղա ունենում» (հարցազրույցին մասնակցած գյումրեցի մի տղամարդ), աղջիկ ունեցող տղամարդիկ անպարկեշտ կատակների են արժանանում

Source: x

WORLD BANK GROUP

Արդյո՞ք կանայք պարտաստ են դիմադրել սեռի ընտրության հարցում գործադրվող ճնշմանը: Հաճախ ոչ ...

- **Կանանց սպառնում է ամուսնալուծություն և դրանց բխող սոցիալական խոցելիություն**
  - *«Շատ բաժանված ընտանիքների ամուսիններ իրենց կնոջը ոչինչ չեն տալիս, քանի որ նրա անունով ոչինչ գրանցված չէ: Բայց չ՞է որ նա պետք է ինչ որ կերպ ապրի:»*
- **Պատահում են նաև ֆիզիկական բռնության դեպքեր և կինը օգնության քիչ հնարավորություն ունի**
  - *«Սովորաբար կանայք ստիպված են հնազանդվել* [ամուսնուն] *քանի որ չունեն որևէ այլընտրանք»* (հարցազրույցին մասնակցած մի կին Ախուրյանից)
  - *«Կանայք բռնության են ենթարկվում ամուսինների և սկեսուրների կողմից: Բռնության վերացման դեպքում սեռի ընտրությամբ պայմանավորված աբորտների թիվը կկրճատվեր»* (երևանցի մի տղամարդ)
  - *«Չկան ընտանեկան բռնության հարցերով զբաղվող կրթված մասնագետներ: Այդ դերը ստանձնել են ոստիկանները: Վերջիններս միակողմանի կարծիք են ձևավորել և երբ որևէ կին գանգատվում է, անմիջապես դա կապում են պոռնկության կամ կնոջ անհավատարմության հետ»* (գյումրեցի իրավաբան)

Աղբյուրը. Դադվիք (2014) հիմնված որակական հետազոտության վրա

WORLD BANK GROUP

Ցնցումներ

WORLD BANK GROUP

Տղային տրվող նախընտրությունը աճում է «ծանր տարիներինն», երբ գործի են դրվում համակարգի ավանդական գոյատևման մեխանիզմները

«Տղային տրով նախընտրությունն աճում է, երբ մարդիկ ենթարկվում են տարբեր սթրեսների, որոնք ստիպում են նրանց դժվար ընտրություն կատարել այն հարցում, թե որ սեռի երեխա պետք է դաստիարակեն» (Das Gupta, 2014)

Սեռերի հարաբերակցության միջև չափազանց բարձր տարբերություն Չինաստանում, 1920-1995թթ.



Աղբյուրը. Դաս Գուպտա և Լի (1999).

Հայաստանում սեռերի միջև հարաբերակցության տարբերությունն աճեց ԽՍՀՄ-ի փլուզումից հետո



Աղբյուրը. ԴասԳուպտա (2014), ՄԱԿ-ի տվյալներ.

WORLD BANK GROUP

ԽՍՀՄ-ի փլուզումը խաթարեց երկրի տնտեսական կյանքը և ավելացրեց տնային տնտեսությունների սոցիալական անապահովությունը



Աղբյուրը. Համաշխարհային զարգացման ցուցանիշները

Աղքատությունը աճ

Բարձր արտագաղթ

Ներքին տեղահանում և հակամարտություն

Բազմաթիվ աշխատատեղեր վերացան, որից տուժեց նաև սոցիալալական պաշտպանության համակարգը

Ֆորմալ հաստատությունների փլուզում. Օրինակ առողջապահության հատվածը

Աղբյուր. Դաս Գուպտա (2014) և Դադվիք (2014).

→ → **Արդյունքում աճեց կախվածությունը հարազատների օգնությունից**

WORLD BANK GROUP

Կան որոշ ապացույցներ, որ 2008-2010թ. ճգնաժամը նույն բացասական ազդեցությունն ունեցավ երեխա ունենալու հարցում կայացվող որոշումների վրա

Reaction to the 2009 Economic Crisis in Armenia



Notes : The figure plots the monthly totals of births (left plot) and male fraction of births (right plot) using the Armenia DHS sample for 2010. The line is created using the Lowess smoothing command (bandwidth .50). The vertical line is placed in January 2009, the onset of the Armenian recession, and the second vertical line is placed at September 2009 (nine months after the beginning of the recession).

Աղբյուրը . Էբենշտայն (2013).

WORLD BANK GROUP

Քաղաքականության տարբերակներ

WORLD BANK GROUP

Ինչ են փորձել այլ երկրները

- Արգելել նախածննդյան փուլում սեռի բացահայտման և/կամ սեռի ընտրության հնարավորությունը

(Հարավային Կորեա, Հնդկաստան, Չինաստան)

  - Աննշան ազդեցություն կամ լավագույն դեպքում անորոշ արդյունք
  - Կարող է ստիպել կանանց դիմելու ցածր որակավորում ունեցող և ավելի թանկ բժիշկների, որը կարող է առողջական խնդիրներ առաջացնել

  - Աղջիկ ունենալու և մեծացնելու համար ֆինանսական լծակներ

- **(Հնդկաստան)**

  - Աննշան ազդեցություն կամ լավագույն դեպքում անորոշ արդյունք
  - Ոչ մեծ ֆինանսական լծակները դժվար թե փոխեն վերաբերմունքը
  - Սեռի ընտրութուն կատարելուն հակված ընտանիքներին հայտնաբերելը բարդ է

Աղբյուրը. Դաս Գուպտա (2014)

WORLD BANK GROUP

Ինչ են փորձել այլ երկրները

Հանրայնացում՝ մարդկանց ձգտումների, սովորույթների և վարքագծի վրա ազդելու նպատակով

- **Զանգվածային լրատվության և հեռուստատեսության ազդեցությունը տղա երեխայի նախընտրության հարցում (Հնդկաստան)**
  - Տղա երեխայի նախընտրության կրճատման, ծնելիության և բռնության ընդունելիության մասին զանգվածային լրատվության և հեռուստատեսության ազդեցության դերի մասին ապացույցներ **(Jensen and Oster, 2009; Pande and Astone, 2007)**
  - Ապացուցվել է զանգվածային լրատվության և հեռուստատեսության ազդեցության արդյունավետությունը ծնելիության և այլ գործոնների վրա
  - Հակաբեղմնավորիչների օգտագործման աճ (Տանզանիա, **Rogers et al. 1999)**
  - Ծնելիության նվազում **(Բրազիլիա, La Ferrara et al. 2012)**
  - Մահճակալների ցանցերի օգտագործում **Use of bed nets (Keefer and Khemani, 2012)**
  - Ծխախոտից հրաժարվելը **(McVey and Stapleton, 2000)**

Աղբյուրը. Դաս Գուպտա (2014) և Դադվիք (2014)

WORLD BANK GROUP

Քաղաքականության մարտահրավերները Հայաստանում

- Նորածինների սեռական հարաբերակցության և հայեցողական աբորտների ու գենդերային անհավասարության հետ կապի մասին անտեղյակություն և թերհավատություն

- Քչերն են մտահոգություն հնչեցնում սեռական անհամաչափության մասին → խնդիրն արհեստորեն ուռչեցվում է, հնից եկող խառնամուսնությունների ավանդույթ և ամուսնանալիս դրա հետևանքների անտեսում (հակառակ Հնդկաստանի և Չինաստանի օրինակներին)

- Շատերը նույնիսկ դրական են վերաբերում այդ երևույթին, ամուսնուն համարելով հողի և ընտանիքի պաշտպանը, հատկապես, երբ բազմամթիվ չափահաս տղամարդիկ լքում են երկիրը

- Աբորտների վերաբերյալ մտահոգությունն ավելի մեծ է քան սեռի ընտրության
  - Լրատվամիջոցների լուսաբանումը, հասարակական բանավեճը և կրոնական հաստատությունները հատուկ ուշադրություն են դարձնում այդ հանգամանքին (ՀՌԿԿ, 2013թ.)

Աղբյուրը. Դադվիք (2014) հիմնված որակական հետազոտության վրա

WORLD BANK GROUP

Մտածելով Հայաստանում քաղաքականության մասին

“«Փոփոխությունները ոչ ֆորմալ կառույցներում և դրանց միջոցով տնային տնտեսությունների վարքագծում խնդրի լուծման գրավականն են, ընդ որում այն իրականացվելի խնդիր է:»

(Համաշխարհային զարգացման զեկույց 2012)

WORLD BANK GROUP

Հիմնախնդիրների լուծմանը միտված քաղաքանության գծով առաջարկություններ Հայաստանի համար.

- **Պտղի սեռի բացահայտման արգելման կամ հղիության արհեստական ընդհատման հարցում կանանց իրավունքների սահմանափակման մասին խորհուրդ ՉԻ ՏՐՎՈՒՄ: Այդ ամենը չի գործել այլ երկրներում և մարդիկ տեղերում վտանգավոր են համարում նման մոտեցումները քանի որ դրանք բժիշկների համար կաշառակիրության նոր աղբյուր կարող են հանդիսանալ և նպաստել ապօրինի ընդհատակյա աբորտներին, լուրջ, երբեմն մահացու հետևանքներով հղի կանանց համար:**

- **Գենդերային հավասարության խթանում և կանանց՝ ճնշումներին դիմակայելու գծով հնարավորությունների բարձրացում, խթանելով կանանց տնտեսական իրավունքները, գույքի և պետական կառույցների հասանելիությունը, պաշտպանությունը ամուսնալուծության կամ բռնության դեպքում և վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) կրթության ապահովումը բոլորի համար:**

Աղբյուրը. Դաս Գուպտա (2014) և Դադվիք (2014)

WORLD BANK GROUP

Խրախուսել ոչ ֆորմալ կառույցների մոտեցումների փոփոխությունները տղա երեխա ունենալու հարցում, զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ պայքարելով բնակչության զանազան խմբերի անցանկալի գենդերային կարծրատիպերի հետ:

- **Ապահովել տղաների և աղջիկների համատարած սեռական կրթությունը դպրոցներում, վերացնելով ռեպրոդուկտիվ գործառույթի մասին սխալ համոզմունքները, ինչպիսիք են.**
  - **«որքան ավելի շատ երեխա է ունենում կինը, այնքան ավելի տոկուն է նրա մարմինը»**
  - **սեռի որոշման հարցում «իմ սկեսրոջ հաշվարկները 90% ճիշտ են լինում» (երևանցի մի կին)**
  - **բժիշկ մասնագետը եզրակացրել է, որ նույնիսկ կրթված մարդիկ չեն ճիշտ չեն՝ պատկերացնում պտղի սեռի ձևավորման հիմքերը՝ հակառակ դեպքում տղամարդիկ ավելի քիչ հիմքեր կունենային մեղադրելու իրենց կանաց տղա չծնելու համար (Dudwick, 2014):**

Աղբյուրը. Դաս Գուպտա (2014) և Դադվիք (2014)

Շնորհակալություն

WORLD BANK GROUP

WORLD BANK GROUP

Հավելված

Բանկի թիմը և նախապատաստական աշխատանքները

Համաշխարհային բանկի հեղինակային թիմը. Մարիա Ե. Դավալոս (տնտեսագետ, խմբի ղեկավար), Ջիորջիա Դեմարշի (ավագ խորհրդատու), Նիսթա Սինհա (ավագ տնտեսագետ)

Նախապատրաստական աշխատանքները.

Das Gupta, Monica (2014). *"Missing Girls" in the South Caucasus countries: trends, possible causes, and policy options*.

Dudwick, Nora (2014). *"Missing Women" in the South Caucasus: Reasons, local perceptions and proposed solutions. (յուրաքանչյուր երկրում անցկացված որակական հետազոտությունների հիման վրա, այդ թվում՝ թիրախային խմբեր, պատմություններ կյանքից և հարցազրույցներ)*

Ebenstein, Avraham (2013). *Sex Selection in Armenia: Causes and Consequences. (միտումների հետազոտում 2000, 2005 և 2010թթ. անցկացված ազգագրական հարցումների միջոցով)*

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան (2013թ.) «Հարավային Կովկասի չծնված աղջիկները» *(Գրականության տեսություն, լրատվամիջոցների տեսություն և ինստիտուցիոնալ քարտեզագրում)*:**World Bank Core Team**: María E. Dávalos (Economist, TTL), Giorgia Demarchi (ETC), Nistha Sinha (Senior Economist)

WORLD BANK GROUP

Որակական հետազոտություն. նպատակ և օրինակ

Համաշխարհային բանկի կողմից մշակված գործիք, որը թույլ է տալիս հասկանալ.

- Տեղական կոնտեքստում սեռի ընտրության զանազան գործոնների կարևորության և վերջիններիս փոփոխության հնարավորություններն ու ձևերը,
- Արդյոք և ինչպես են փոխվում սեռի ընտրության հարցում ճնշումները,
- Հանրության իրազեկվածությունը սեփական երկրում սեռերի անհամաչափ բաշխվածության և հնարավոր հետևանքների վերաբերյալ,
- Սեռի ընտրություն կատարելու կրճատման գծով քաղաքականության տարբերակները:

Ընտված չորս համայնքները

- Երևան
- Գյումրի, երկրորդ մեծ քաղաքը
- Ախուրյան, Շիրակի մարզում փոքր քաղաք (Գյումրիի մոտ)
- Գյուղ Արագածոտնի մարզում

WORLD BANK GROUP

Որակական հետազոտություն. Մեթոդաբանություն

Վեց թիրախային խումբ յուրաքանչյուր համայնքից, որոնք բաշխված են ըստ սեռի և տարիքի:

- Երիտասարդ, դեռ չամուսնացած 18-25 տարեկան անձինք (տղամարդկանց և կանանց խմբեր)
- Երբևէ ամուսնացած, 26-45 տարեկան անձինք (տղամարդկանց և կանանց խմբեր)
- Երբևէ ամուսնացած 60 տարեկան և բարձր անձինք (տղամարդկանց և կանանց խմբեր)
- Հնարավորին չափով հաշվի է առնվել խմբերում ընդգրկված անձանց տարբեր կրթական մակարդակի, մասնագիտության, ընտանիքի մեծության և կազմի ապահովման հնարավորությունը

Հինգ անհատական հարցազրույց յուրաքանչյուր համայնքում + լրացուցիչ հինգ հարցազրույց մայրաքաղաքում, այդ թվում.

- Ոչ ֆորմալ համայնքային առաջնորդների կամ տեղական պաշտոնյաների կամ կրոնական առաջնորդների,
- Գենդերային հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների,
- Կրթության ոլորտի մասնագետների, իրավաբանների, սոցիոլոգների և ազգագրագետ մասնագետների,
- Առողջապահության ոլորտի մասնագետների (գինեկոլոգ, մանկաբարձ և/կամ ուլտրաձայնային հետազոտման մասնագետ) հետ:

WORLD BANK GROUP